ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«07» 12 2012թ. N: 170 ք.Գյումրի

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 626-Ն որոշմամբ հաստատված <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի>> 10-րդ և 11-րդ կետերի դրույթները՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մուշ-2» թաղամասի նորակառույց դպրոցի հարակից ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները ընդունելու նպատակով ձևավորել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Ալբերտ Մարգարյանին՝ սահմանված ժամկետում և կարգով կազմել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և ներկայացնել հաստատման:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2012 թվականի 07.12 ի
N 170 կարգադրության

Կ Ա Զ Մ
ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ալբերտ Մարգարյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ նախագահ,

Անդամներ՝

Խաչատուր Խնձրցյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,

Ժոռա Միքայելյան - Քաղաքաշինական պետական տեսչության ՀՀ Շիրակի մարզի տարածքային բաժնի պետ,

Հովհաննես Տոնոյան - <<Ախուրյանի Կոռպշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Անատոլի Դոգուզով - <<Երանգ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Սամվել Նիկողոսյան - <<Հայկասար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Կնյազ Մանասյան – Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան